ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԱՄԵՆԱՄՌԱՅԼ ԷՋԸ

Հայկ. ՍՍՍՌ ԳԱ ակադեմիկոս ԼԵՎՈՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Առաջին համաշխարհային պատերազմը այն ամենասարսափելի ողբերգությունն էր, որ մինչ այդ երբևէ ապրել էր մարդկությունը։ Իր մասշտաբներով դեռևս չտեսնված այդ մահվան խրախճանքը բռնել էր համարյա ողջ Եվրոպան, Մերձավոր Արևելքն ու Հյուսիսային Աֆրիկան, ներգրավելով աշխարհի երեք տասնյակից ավելի պետությունների բազմամիլիոն բնակչությունը։ Պատերազմում զոհվեց ավելի քան 10 միլիոն մարդ, չհաշված 30 միլիոն վիրավորներին, խեղանդամներին ու զանազան հիվանդություններից մահացածներին։ Չենք խոսում այն հսկայական նյութական կորուստների մասին, որ կրեց մարդկությունը և որը հաշվելու ոչ մի հնարավորություն չկա։

Համաշխարհային առաջին պատերազմի տարիներին, մասնավորապես 1915—1916 թթ., ամենամեծ ոճրագործությունը կատարվեց Արևմտյան Հայաստանում։ Թուրքական այն ժամանակվա կառավարության գլխավոր կլիկը Թալեաթի, Էնվերի ու Ջեմալի գլխավորությամբ, ցանկանում էր վերացնել արևմտահայությունը, որը խոչընդոտ էր հանդիսանում նրանց ցնորամիտ պանթուրքական պլանների իրականացման ճանապարհին։ Գերմանական իմպերիալիստների հովանավորությամբ և օժանդակությամբ նրանք չտեսնված բարբարոսությամբ ավերեցին Արևմտյան Հայաստանի հազարավոր գյուղեր ու քաղաքներ, սրի քաշեցին ու կոտորեցին մեկ միլիոնից ավելի հայեր։ Արևմտահայության հրաշքով ազատված բեկորները ցրվեցին աշխարհով մեկ։

Պատերազմի առաջին ամիսներին ինձ վիճակվեց ականատես լինել այդ ահավոր անցքերի նախանշաններին։ 1914 թ. աշնանը ես, որպես զինվորական բժիշկ, ծառայում էի Կովկասյան ռազմաճակատի զորամասերից մեկում (39-րդ հրետանային բրիգադում)։ Երբ թուրքական զորքերի հարձակումից հետո եկսվեցին պատերազմական գործողությունները նաև Կովկասյան ռազմաճակատում, մեր զորամասը նույնպես անցավ հարձակման՝ Հասան-գալայի ուղղությամբ։

Այդ օրերին ես եղա Քյոփրի-Քյոյ հայկական գյուղում և զրուցեցի տեղի հայ բնակիչների հետ։ Նրանք ինձ պատմեցին այն անլսելի բարբարոսությունների ու հալածանքների մասին, որոնց տարիներ շարունակ ենթարկվում էին իրենք՝ թուրքական կերիշխանության տակ։ Ինձ առաջնորդեցին գյուղի խղճուկ եկեղեցին, որտեղ հատակին ընկած էին երկու երիտասարդների դիակներ։ Ներկաները լաց լինելով պատմեցին ողբերգական եղելությունը. նախորդ օրը Քյոփրի-Քյոյի այդ անմեղ բնակիչներին առանց որևէ պատճառի դաշտում սպանել էին թուրք հրոսակները։

Անվերջ ճնշումների, բռնությունների ու սպանությունների ենթակա գյուղացիները իրենց փրկության միակ հույսը կապում էին ռուսական բանակի հաղթանակի հետ։ Դա ցայտուն կերպով նկատվեց խոսակցությունների ժամանակ. բավական էր մի փոքր ակնարկ այն մասին, որ իմ զինվորները թարմ

սննդամթերքի կարիք ունեն, որպեսզի գյուղի բնակիչները մեծ պատրաստակամությամբ օգնեին մեզ։ Չնայած մենք առաջարկեցինք վճարել սննդամթերքի համար, բայց նրանք հրաժարվեցին դրամ վերցնել։

Երբ ես Քյոփրի-Քյոյից վերադարձա իմ զորամասը, հրետանային փոխհրաձգությունը գնալով ուժեղանում էր։ Հազիվ էինք մենք վերջացրել մեր համեստ ընթրիքը, երբ ստացվեց ժամանակավոր նահանջի հրաման։ Իմ ծանոթ հրետանային սպան հաղորդեց, որ թուրքերն օգտագործում են շատ ավելի հեռահար թնդանոթներ, քան մենք։ Մեզ համար գաղտնիք չէր, որ թուրքերին հրետանի են մատակարարում գերմանացիները և որ այդ հրետանու ղեկավար սպաներն էլ, ըստ երևույթին, գերմանացիներ են։

Ստացված հրամանի համաձայն մեր զորամասն սկսեց նահանջել։ Շուտով մթնեց, և մենք գիշերեցինք բաց երկնքի տակ։ Հաջորդ առավոտյան ես զարմանքով նկատեցի, որ հայ գյուղացիների մի բազմություն մեր զորամասի կողքով, մեզ հետ շարժվում է դեպի սահմանը։ Ամբոխի մեջ ես նկատեցի և այն մարդկանց, որոնց նախորդ օրը հանդիպել էի Քյոփրի-Քյոյում։ Պարզվեց, որ տեսնելով ռուսական զորքի նահանջը, տեղական բնակիչները որոշել էին թողնել իրենց տուն ու տեղը, կայքն ու ունեցվածքը և գնալ մեր զորքերի հետևից։ Քայլում էին երեխաները, կանայք, տղամարդիկ ու ծերերը՝ հետևում թողած ամեն ինչ, քայլում էին մարդիկ, որոնք համոզված էին, որ կբնաջնջվեն թուրքերի կողմից, եթե մնան տեղում...

Կես դար է անցել այն ողբերգական օրերից, բայց մինչև հիմա էլ իմ աչքերի առջև են Քյոփրի-Քյոյի այն խաղաղ շինականները, որոնք թուրքական յաթաղանի սարսափից հալածված, աշնանային այն ցուրտ օրերին հեռացան իրենց հայրենի հողից։ Դրանք իմ տեսած առաջին հայ գաղթականներն էին, որ թողնելով իրենց հինավուրց երկիրը, գնում էին ապաստան որոնելու ռուսական հողում։

Հետագայում, երբ ռուսական բանակը հաղթանակներով շարժվեց առաջ, ամենքիս համար ավելի պարզ դարձավ, թե ինչպիսի անլուր տառապանքներ կրեց արևմտահայությունը 1914—1915 թթ. ընթացքում, ենթարկվելով թուրք բարբարոսների մասսայական ջարդերին, տեղահանմանն ու ոչնչացմանը։

1915—1916 թթ. հայկական կոտորածները մեր բազմաչարչար ժողովրդի դարավոր պատմության ամենամռայլ էջն են կազմում։ Նման ողբերգություն քիչ է պատահել անգամ համաշխարհային պատմության մեջ։

Մեծ Եղեռնի զոհերի նվիրական հիշատակը միշտ արթուն պիտի պահի մեր ժողովրդին, առաջավոր ամբողջ մարդկությանը, պայքարի կոչելով ընդդեմ պատերազմի ու անմեղ աշխատավորների ոչնչացման, ընդդեմ գենոցիդի ամեն մի ակտի, հանուն խաղաղ ու շինարար, ստեղծագործ աշխատանքի ամբողջ աշխարհում։